# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## N ՀՀԿԱ-ԳՀԾՁԲ-17/46-1

ք. Երևան

«14» սեպտեմբերի 2017թ.

Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի գործերի կառավարիչ Դ. Բեգլարյանի, որը գործում է «Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի պետական կառավարչական հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՖԼԵՇ ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Լալայանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է ոչ ավել քան 10250000 (տաս միլիոն երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման մեկ միավորի գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել

ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգտանները (ինպարգությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ծեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **30** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ կառավարության աշխատակազմ
ք. Երևան, Կառավարական թ.1 շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022085
ՀՎՀՀ 02505554
էլ. հասցեն՝ gnumner@gov.am

/Դ. [illegible]/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«ՖԼԵՇ ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ
ք. Երևան, Ռուբինյանց փ. 31
«Արարատ բանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510012745550100
ՀՎՀՀ 00873228
էլ. հասցեն՝ info@flashmotors.am
Հեռ. (060)522555, (091)542855

/Ա. [illegible]/
Կ.Տ.

*Հավելված N 1*
*«14» սեպտեմբերի 2017թ. կնքված*
*ՀՀԿԱ-ԳՀԾՁԲ-17/46-1 ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չ/մ | Ծառայության ընդհանուր գինը /ՀՀ դրամ/ | ընդհանուր քանակը | մատուցման հասցեն | մատուցման ժամկետը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1, 2, 3, 4, 5, 6, 8, 9 | 50111130-2 | Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ համաձայն ստորև ներկայացված գնացուցակի | դրամ | 10,250,000 | 1 | Կատարողի տեխնիկական սպասարկման կայանում | Սույն պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառվելու հաջորդ օրվանից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 15-ը |

ԳՆԱՑՈՒՑԱԿ

| NN | SU-1,SU-2 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քայլուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները | Տրանսպորտային միջոցների մակնիշները/տեսակները/ըստ չափաբաժինների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1-ին չափաբաժին | 2-րդ չափաբաժին | 3-րդ չափաբաժին | 4-րդ չափաբաժին | 5-րդ չափաբաժին | 6-րդ չափաբաժին | 8-րդ չափաբաժին | 9-րդ չափաբաժին |
| | | Նիսսան Տիդա | Նիսսան Մաքսիմա | Հյունդայի Էլանտրա, | BMW 750LI և 523L | Հյունդայի Tucson | Լեքսուս LX-470, Տոյոտա land cruiser | Կիա OPTIMA, Կիա Սերատո | Հյունդայի H-1 |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| | SU-1 ներառվող ծառայությունների անվանումը | Գնացուցակ /ՀՀ դրամ/ | | | | | | | |
| 1 | Բռնկման համակարգի ստուգում | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2 | Սառեցման համակարգի ստուգում | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 |
| 3 | Յուղման համակարգի ստուգում | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 |
| 4 | Արտածման համակարգի ստուգում | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 |
| 5 | Կցորդման համակարգի ստուգում | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 |
| 6 | ՓՏ-ի աշխատանքի ստուգում | [redacted] | 10 | [redacted] | 10 | [redacted] | [redacted] | [redacted] | 10 |
| 7 | ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում | 10 | [redacted] | 10 | 10 | 10 | 10 | 10 | [redacted] |
| 8 | Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 |
| 9 | Բաշխիչ սռնիի աշխատանքի ստուգ. | [redacted] | [redacted] | [redacted] | [redacted] | 10 | 10 | [redacted] | [redacted] |
| 10 | Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 |
| 11 | Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 |
| 12 | Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 |
| 13 | ABS համակարգի ստուգում | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 |
| 14 | Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում | 3,000 | 3,000 | 3,000 | 3,000 | 3,000 | 3,000 | 3,000 | 3,000 |
| 15 | Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում | 1,000 | 1,000 | 1,000 | 1,000 | 1,000 | 1,000 | 1,000 | 1,000 |
| 16 | Թափքի վիճակի ստուգում | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 |
| 17 | Տարբեր ազդանշանների լույսի որակի և մակարդակների ստուգում | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 |
| | **SU-1 ներառվող ծառայությունների անվանումը** | | | | | | | | |
| 18 | Շարժիչի հանում տեղադրում | 25,000 | 35,000 | 35,000 | 40,000 | 40,000 | 50,000 | 40,000 | 30,000 |
| 19 | Նույնը DOHC (2 բաշխիչ լիսեռ) դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 20 | Նույնը կոնդիցիոների դեպքում | 30,000 | 40,000 | 35,000 | 40,000 | 0 | 0 | 0 | 0 |
| 21 | Նույնը ԱՓՏ-ի դեպքում | 0 | 0 | 0 | 45,000 | 0 | 0 | 0 | 0 |
| 22 | Շարժիչի վերականգնում | 140,000 | 0 | 150,000 | 200,000 | 0 | 0 | 180,000 | 140,000 |
| 23 | Նույնը DOHC դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 24 | Նույնը V6-ի դեպքում | 0 | 200,000 | 0 | 0 | 200,000 | 300,000 | 0 | 0 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 25 | Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում | 4,000 | 6,000 | 6,000 | 6,000 | 5,000 | 7,000 | 6,000 | 6,000 |
| 26 | Բ/փխերի կախարիչի հանում և տեղադրում | 60,000 | 8,000 | 10,000 | 12,000 | 15,000 | 15,000 | 12,000 | 10,000 |
| 27 | Նույնը աջի համար (V6) | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 28 | Նույնը ձախի համար (V6) | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 29 | Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում | 40,000 | 30,000 | 40,000 | 40,000 | 40,000 | 40,000 | 40,000 | 40,000 |
| 30 | Նույնը աջի համար (V6) | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 31 | Նույնը ձախի համար (V6) | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 32 | Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում | 42,000 | 32,000 | 42,000 | 42,000 | 42,000 | 42,000 | 42,000 | 42,000 |
| 33 | Շարժիչի գլխիկի վերանորոգում | 40,000 | 40,000 | 40,000 | 50,000 | 50,000 | 50,000 | 40,000 | 40,000 |
| 34 | Փականի խցուկի փոխարինում | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 |
| 35 | Նույնը V6-ի դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 36 | Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում | 20,000 | 20,000 | 20,000 | 30,000 | 30,000 | 40,000 | 20,000 | 20,000 |
| 37 | Նույնը V6-ի ձախի դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 38 | Նույնը V6-ի աջի դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 39 | Նույնը DOHC դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 40 | Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում | 3,000 | 3,000 | 3,000 | 3,000 | 3,000 | 3,000 | 3,000 | 3,000 |
| 41 | Հրիչների փոխարինում DOHC | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 |
| 42 | Նույնը DOHC դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 43 | Ատամնավոր փոկի փոխարինում | [redacted] | 30,000 | 20,000 | 0 | 30,000 | 35,000 | [redacted] | 20,000 |
| 44 | Նույնը DOHC դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 45 | Նույնը V6-ի դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 46 | Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 |
| 47 | Նույնը կոնդիցիոների դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 48 | Նույնը DOHC դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 49 | Նույնը կոնդիցիոների դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 50 | Նույնը V6-ի դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 51 | Նույնը կոնդիցիոների դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 52 | Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում | 30,000 | 40,000 | 40,000 | 40,000 | 45,000 | 50,000 | 40,000 | 40,000 |
| 53 | Նույնը ԱՓՏ-ի դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 54 | Մխոցային օղակների փոխարինում | 80,000 | 120,000 | 80,000 | 120,000 | 100,000 | 120,000 | 100,000 | 80,000 |
| 55 | Նույնը DOHC դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 56 | Նույնը V6-ի դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 57 | Թափանիվի հանում և տեղադրում | 3,000 | 3,000 | 3,000 | 3,000 | 3,000 | 3,000 | 3,000 | 3,000 |
| | **2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ** | | | | | | | | |
| 58 | Յուղի և յուղի զտիչի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 59 | Յուղի պոմպի փոխարինում | 18,000 | 25,000 | 20,000 | 30,000 | 30,000 | 40,000 | 30,000 | 20,000 |
| 60 | Նույնը DOHC դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 61 | Նույնը V6-ի դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 62 | Ղեկավարման բլոկի վերանորոգում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 63 | Բռնկման կարգավորում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 64 | CO կարգավորում | 1,000 | 1,000 | 1,000 | 1,000 | 1,000 | 1,000 | 1,000 | 1,000 |
| 65 | Օդի զտիչի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 66 | Սրահի զտիչի փոխարինում | 2,500 | 2,500 | 2,500 | 2,500 | 2,500 | 2,500 | 2,500 | 2,500 |
| 67 | Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում | 3,000 | 3,000 | 3,000 | 3,000 | 3,000 | 3,000 | 3,000 | 3,000 |
| 68 | Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 |
| 69 | Վառելիքամղիչի փոխարինում | 7,000 | 10,000 | 7,000 | 10,000 | 10,000 | 12,000 | 10,000 | 8,000 |
| 70 | Վառելիքի զտիչի փոխարինում | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 |
| 71 | Վառելիքի բաքի հանում և տեղադրում | 10,000 | 10,000 | 10,000 | 15,000 | 10,000 | 15,000 | 10,000 | 10,000 |
| | **3. Սառեցման և արտածման համակարգ** | | | | | | | | |
| 72 | Հովհարի փոկի հանում և տեղադրում | 3,000 | 5,000 | 4,000 | 5,000 | 5,000 | 5,000 | 40,000 | 40,000 |
| 73 | Հովհարի հանում և տեղադրում | 7,000 | 8,000 | 8,000 | 10,000 | 10,000 | 10,000 | 10,000 | 8,000 |
| 74 | Կոնդիցիոների կոմպրեսորի փոխարինում | 10,000 | 10,000 | 10,000 | 30,000 | 15,000 | 20,000 | 10,000 | 15,000 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 75 | Կոնդիցիոների և ջեռուցման համակարգի փոխարինում | 50,000 | 50,000 | 50,000 | 60,000 | 60,000 | 60,000 | 50,000 | 50,000 |
| 76 | Ռադիատորի հանում և տեղադրում | 8,000 | 10,000 | 10,000 | 12,000 | 12,000 | 12,000 | 12,000 | 10,000 |
| 77 | Նույնը կոնդիցիոների դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 78 | Նույնը ԱՓՏ-ի դեպքում | 0 | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 79 | Ռադիատորի վերանորոգում | 40,000 | 40,000 | 40,000 | 40,000 | 40,000 | 40,000 | 40,000 | 40,000 |
| 80 | Թերմոստատի փոխարինում | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 | 6,000 | 7,000 | 6,000 | 5,000 |
| 81 | Ջրի պոմպի փոխարինում | 8,000 | 10,000 | 10,000 | 10,000 | 10,000 | 10,000 | 10,000 | 10,000 |
| 82 | Նույնը DOHC և V-6 դեպքում | 0 | 35,000 | 30,000 | 35,000 | 30,000 | 35,000 | 35,000 | 25,000 |
| 83 | Նույնը կոնդիցիոների դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 84 | Ջրի պոմպի վերանորոգում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 85 | Նույնը DOHC դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 86 | Նույնը կոնդիցիոների դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 87 | Ընդարձակող բաքի փոխարինում | 4,000 | 8,000 | 5,000 | 10,000 | 5,000 | 10,000 | 10,000 | 5,000 |
| 88 | Խլարարի հանում և տեղադրում | 5,000 | 5,000 | 5,000 | 6,000 | 6,000 | 7,000 | 6,000 | 5,000 |
| 89 | Նույնը DOHC դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 90 | Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում | 4,000 | 5,000 | 5,000 | 7,000 | 5,000 | 7,000 | 6,000 | 5,000 |
| 91 | Սրահի զտիչի փոխարինում | 2,000 | 2,500 | 2,000 | 2,500 | 2,500 | 2,500 | 2,500 | 2,000 |
| | **4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ** | | | | | | | | |
| 92 | Բանվ.կամ գլխ.գլանի հանում և տեղադրում | 8,000 | 10,000 | 8,000 | 8,000 | 10,000 | 10,000 | 10,000 | 8,000 |
| 93 | Բանվ.կամ գլխ.գլանի վերանորոգում | 4,000 | 5,000 | 6,000 | 8,000 | 8,000 | 10,000 | 8,000 | 8,000 |
| 94 | Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 95 | Կցորդման ոտնակի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 96 | Կցորդման ճոպանի հանում և տեղադրում | | 20,000 | | | | | 20,000 | 20,000 |
| 97 | ՓՏ-ի հանում և տեղադրում | | 25,000 | | 25,000 | | | | 25,000 |
| 98 | ՓՏ-ի վերանորոգում | | 100,000 | | 100,000 | | | | 100,000 |
| 99 | ՓՏ-ի առանցքակալի փոխարինում | | 25,000 | | 25,000 | | | | 25,000 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 100 | ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում | | 10 | | 10 | | | | 10 |
| 101 | Վազքաչափի շարժաբեր փոխարինում | 1,000 | 1,000 | 1,000 | 1,000 | 1,000 | 1,000 | 1,000 | 1,000 |
| 102 | ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում | 50,000 | | 50,000 | 50,000 | 50,000 | 50,000 | 50,000 | |
| 103 | ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում | 100,000 | | 100,000 | 100,000 | 100,000 | 100,000 | 100,000 | |
| 104 | Նույնը V6-ի համար | 10 | | 10 | 10 | 10 | 10 | 10 | |
| 105 | ԱՓՏ-ի հանում և տեղադրում | 35,000 | | 35,000 | 45,000 | 45,000 | 45,000 | 35,000 | |
| 106 | Նույնը V6-ի համար | 10 | | 10 | 10 | 10 | 10 | 10 | |
| 107 | ԱՓՏ-ի վերանորոգում | 160,000 | | 160,000 | 250,000 | 160,000 | 250,000 | 160,000 | |
| 108 | Նույնը V6-ի համար | 10 | | 10 | 10 | 10 | 10 | 10 | |
| 109 | ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում | 12,000 | | 12,000 | 12,000 | 12,000 | 12,000 | 12,000 | |
| | **5.Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ** | | | | | | | | |
| 110 | Բաշխիչ տուփի հանում և տեղադրում | | | | | 25,000 | 50,000 | | |
| 111 | Բաշխիչ տուփի հանում և տեղադրում վերանորոգումով | | | | | 80,000 | 100,000 | | |
| 112 | Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում | | | | | 8,000 | 8,000 | | |
| 113 | Կարդանային լիսեռի հանում և տեղադրում | | | | 12,000 | 12,000 | 15,000 | 12,000 | |
| 114 | Կարդանային լիսեռի հանում և տեղադրում,վերանորոգումով | | | | 0 | 0 | 0 | 0 | |
| 115 | Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում | | | | 4,000 | 5,000 | 5,000 | 5,000 | |
| 116 | Կարդանային լիսեռի միջանկյալ կախոցի հանում ևտեղադրում | | | | 8,000 | 8,000 | 8,000 | 8,000 | |
| | **6.Առջևի և հետևի կամրջակներ** | | | | | | | | |
| 116 | Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում | | | | 25,000 | 30,000 | 30,000 | 30,000 | |
| 117 | Առջևի կամ հետևի կամրջակի լիակատար քանդում նհավաքում | | | | 80,000 | 80,000 | 80,000 | 80,000 | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 118 | Առջևի կամ հետևի կամրջակի մամռակի քանդում և հավաքում | [redacted] | | | 40,000 | 40,000 | 40,000 | 40,000 | [redacted] |
| 119 | Առջևի կամ հետևի կամրջակի կիսասռնու հանում և տեղադրում | | | | 0 | 0 | 0 | 0 | |
| 120 | Կիսասռնու առանցքակալի փոխարինում | | | | 10,000 | 10,000 | 10,000 | 10,000 | |
| | 7. Կախոց | | | | | | | | |
| 121 | Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում | 25,000 | 30,000 | 30,000 | 0 | 30,000 | 40,000 | 30,000 | 25,000 |
| 122 | Տրավերսի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 123 | Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում | 7,000 | 8,000 | 8,000 | 8,000 | 8,000 | 8,000 | 8,000 | 6,000 |
| 124 | Անվակունդի առանցքակալի փոխարինում | 5,000 | 7,000 | 7,000 | 8,000 | 8,000 | 10,000 | 10,000 | 8,000 |
| 125 | Նույնը հետին տանող ա/մ-երի համար | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 126 | Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում | 6,000 | 8,000 | 8,000 | 10,000 | 10,000 | 10,000 | 8,000 | 8,000 |
| 127 | Նույնը հետին տանող ա/մ-երի համար | [redacted] | | | 0 | 0 | 0 | [redacted] | 0 |
| 128 | Ձախ կամ աջ հոդակապի խցուկների փոխարինում | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 |
| 129 | Ձախ կամ աջ հոդակապի առանցքակալների փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 130 | Ցցամեղմիչի թասակի փոխարինում | 5,000 | 6,000 | 6,000 | 6,000 | 6,000 | 7,000 | 7,000 | 6,000 |
| 131 | Զսպանակի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 132 | Զսպակի հանում և տեղադրում | [redacted] | | | | | | 0 | 0 |
| 133 | Զսպակի վրանների փոխարինում | | | | | | | 0 | 0 |
| 134 | Առջևի ցցամեղմիչի հանում և տեղադրում | 6,000 | 6,000 | 6,000 | 7,000 | 6,000 | 8,000 | 6,000 | 6,000 |
| 135 | Մեղմիչի թասակի առանցքակալի փոխարինում | 5,000 | 6,000 | 6,000 | 6,000 | 6,000 | 7,000 | 7,000 | 6,000 |
| 136 | Ներքևի լծակի վրանների տեղադրում | 6,000 | 6,000 | 6,000 | 6,000 | 6,000 | 8,000 | 6,000 | 6,000 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 137 | Ներքևի լծակի վռանների փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 138 | Առջևի աջ կամ ձախ ձգաձողերի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 139 | Միջին ձգաձողի հանում և տեղադրում | 5,000 | 6,000 | 6,000 | 6,000 | 6,000 | 7,000 | 7,000 | 6,000 |
| 140 | Ճոճանակային լծակի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 6,000 | 0 | 0 | 0 | 6,000 |
| 141 | Վերևի լծակի հանում և տեղադրում | 0 | 0 | 6,000 | 6,000 | 7,000 | 8,000 | 0 | 4,000 |
| 142 | Վերևի լծակի վռանների փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 143 | Գնդե հոդակապերի փոխարինում | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 |
| 144 | Ծայրակալների հանում և տեղադրում | 2,500 | 2,500 | 2,500 | 2,500 | 2,500 | 2,500 | 2,500 | 2,500 |
| 145 | Առջևի կայունարարի հանում և տեղադրում | 6,000 | 8,000 | 8,000 | 10,000 | 8,000 | 10,000 | 8,000 | 8,000 |
| 146 | Առջևի կայունարարի վռանների փոխարինում | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 |
| 147 | Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 148 | Հետևի կայունարարի վռանների փոխարինում | [redacted] | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 |
| 149 | Հետևի կայունարարի կանգնակի փոխարինում | [redacted] | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 |
| 150 | Հետևի զսպանակի փոխարինում | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 |
| 151 | Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 | 6,000 | 6,000 | 5,000 | 6,000 |
| 152 | Հետևի ձգաձողի հանում և տեղադրում | 0 | 0 | 3,500 | 3,500 | 3,500 | 3,500 | 3,500 | 0 |
| 153 | Հետևի երկաթաձողի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 154 | Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում | 2,000 | 2,000 | 2,000 | 2,500 | 2,500 | 2,500 | 2,000 | 2,000 |
| 155 | Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում | 0 | 6,000 | 6,000 | 8,000 | 8,000 | 0 | 6,000 | 8,000 |
| 156 | Անկյունագծային լծակի վռանների փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 157 | Անվարացքի կարգավորում | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 |
| 158 | Ձոդման աշխատանքներ 1 քառ.սմ համար | 1,000 | 1,000 | 1,000 | 1,000 | 1,000 | 1,000 | 1,000 | 1,000 |
| | **8.Ղեկային մեխանիզմ** | | | | | | | | |
| 159 | Ղեկային կալոնի հանում և տեղադրում | 15,000 | 0 | 20,000 | 0 | 0 | 0 | 20,000 | 20,000 |
| 160 | Նույնը V6-ի համար | 0 | 25,000 | 0 | 30,000 | 30,000 | 30,000 | 0 | 0 |
| 161 | Ղեկային կալոնի վերանորոգում | 30,000 | 35,000 | 35,000 | 35,000 | 40,000 | 40,000 | 40,000 | 40,000 |
| 162 | ՂԿ-ի առանցքակալի և/կամ վրանների փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 163 | ՂԿ-ի հողակապերի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 164 | Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում | 10,000 | 15,000 | 15,000 | 15,000 | 10,000 | 15,000 | 10,000 | 15,000 |
| 165 | Նույնը DOHC դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 166 | ղեկային մեղմիչի փոխարինում | 25,000 | 25,000 | 25,000 | 25,000 | 25,000 | 25,000 | 25,000 | 25,000 |
| 167 | Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում | 3,500 | 4,000 | 4,000 | 4,000 | 3,500 | 3,500 | 3,500 | 3,500 |
| 168 | Նույնը DOHC դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 169 | Հիդրոուժեղարարի փոխրակի հանում և տեղադրում | 6,000 | 8,000 | 8,000 | 8,000 | 6,000 | 6,000 | 6,000 | 8,000 |
| 170 | Նույնը DOHC դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 171 | Նույն կողիցիոնների դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 172 | ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում | 10,000 | 10,000 | 10,000 | 20,000 | 20,000 | 20,000 | 0 | 0 |
| 173 | ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում | 25,000 | 25,000 | 25,000 | 30,000 | 30,000 | 30,000 | 10,000 | 20,000 |
| | **9. Արգելակային համակարգ** | | | | | | | 25,000 | 25,000 |
| 174 | Գլխ.գլանի հանում և տեղադրում | 6,000 | 6,000 | 6,000 | 8,000 | 8,000 | 8,000 | 8,000 | 8,000 |
| 175 | Գլխ. գլանի վերանորոգում | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 |
| 176 | Վակումային ուժեղարարի հանում և տեղադրում | 10,000 | 10,000 | 10,000 | 15,000 | 10,000 | 15,000 | 15,000 | 15,000 |
| 177 | Բանվ. գլանի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 178 | Բանվ. գլանի վերանորոգում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 179 | Արգելակային համակարգի օդահանում | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 |
| 180 | Առջևի պահանգների հանում և տեղադրում | 6,000 | 6,000 | 6,000 | 6,000 | 6,000 | 6,000 | 6,000 | 6,000 |
| 181 | Հետևի պահանգների հանում և տեղադրում | 6,000 | 6,000 | 6,000 | 6,000 | 6,000 | 6,000 | 6,000 | 6,000 |
| 182 | Առջևի պահանգների վերանորոգում | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 |
| 183 | Հետևի պահանգների վերանորոգում | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 |
| 184 | Առջևի պահանգների ուղորդիչի փոխարինում | 4,000 | 4,000 | 4,000 | 4,000 | 4,000 | 4,000 | 4,000 | 4,000 |
| 185 | Հետևի պահանգների ուղորդիչի փոխարինում | 4,000 | 4,000 | 4,000 | 4,000 | 4,000 | 4,000 | 4,000 | 4,000 |
| 186 | Արգելակային փողրակի փոխարինում | 3,500 | 3,500 | 3,500 | 3,500 | 3,500 | 3,500 | 3,500 | 3,500 |
| 187 | Առջևի արգելակային կոճղակների փոխարինում | 4,000 | 4,000 | 4,000 | 4,000 | 4,000 | 4,000 | 4,000 | 4,000 |
| 188 | Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում | [redacted] | 4,000 | 4,000 | 4,000 | 4,000 | 4,000 | 4,000 | 4,000 |
| 189 | Հետևի կոճղակների փոխարինում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 190 | Առջևի արգելակային սկավառակի փոխարինում | 3,000 | 3,000 | 3,000 | 3,000 | 3,000 | 3,000 | 3,000 | 3,000 |
| 191 | Հետևի արգելակային սկավառակի փոխարինում | 3,000 | 3,000 | 3,000 | 3,000 | 3,000 | 3,000 | 3,000 | 3,000 |
| 192 | Արգելակային սկավառակի հղկում | 3,000 | 3,000 | 3,000 | 3,000 | 3,000 | 3,000 | 3,000 | 3,000 |
| 193 | Արգելակային սեղմակի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 194 | ABS-ի հանում և տեղադրում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 195 | ABS-ի վերանորոգում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 196 | Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 |
| 197 | Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 |
| | **10. Էլեկտրասարքավորում** | | | | | | | | |
| 198 | Էլեկտրասարքավորման վերանորոգում | 1,000 | 1,000 | 1,000 | 1,000 | 1,000 | 1,000 | 1,000 | 1,000 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 199 | Չափիչ սարքերի հանում և տեղադրում | 1,000 | 1,000 | 1,000 | 1,000 | 1,000 | 1,000 | 1,000 | 1,000 |
| 200 | Գեներատորի հանում և տեղադրում | 7,000 | 8,000 | 8,000 | 8,000 | 8,000 | 8,000 | 8,000 | 8,000 |
| 201 | Նույնը V6-ի դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 202 | Նույնը հիդրոուժեղարարի դեպքում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 203 | Գեներատորի վերանորոգում | 10,000 | 10,000 | 10,000 | 10,000 | 10,000 | 10,000 | 10,000 | 10,000 |
| 204 | Մեկնարկիչի հանում և տեղադրում | 5,000 | 5,000 | 10,000 | 10,000 | 10,000 | 10,000 | 10,000 | 10,000 |
| 205 | Մեկնարկիչի վերանորոգում | 10,000 | 10,000 | 10,000 | 10,000 | 10,000 | 10,000 | 10,000 | 10,000 |
| 206 | Առջևի լապտերի հանում և տեղադրում | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 |
| 207 | Հետևի լապտերի հանում և տեղադրում | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 |
| 208 | Բռնկման կողպեքի հանում և տեղադրում | 4,000 | 4,000 | 4,000 | 4,000 | 4,000 | 4,000 | 4,000 | 4,000 |
| 209 | Վազքաչափի հանում և տեղադրում | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 |
| 210 | Վազքաչափի ճոպանի հանում և տեղադրում | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 |
| 211 | Սարքերի վահանի հանում և տեղադրում | 9,000 | 9,000 | 9,000 | 9,000 | 9,000 | 9,000 | 9,000 | 9,000 |
| 212 | Արագաչափի հանում և տեղադրում | 1,000 | 1,000 | 1,000 | 1,000 | 1,000 | 1,000 | 1,000 | 1,000 |
| 213 | Ազդանշանի հանում և տեղադրում | 3,000 | 3,000 | 3,000 | 3,000 | 3,000 | 3,000 | 3,000 | 3,000 |
| 214 | Ապակելվացիչի շարժիչի հանում և տեղադրում | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 |
| 215 | Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում | 10,000 | 10,000 | 10,000 | 10,000 | 10,000 | 10,000 | 10,000 | 10,000 |
| 216 | Ազդանշանային համակարգի տեղադրում | 1,000 | 1,000 | 1,000 | 1,000 | 1,000 | 1,000 | 1,000 | 1,000 |
| 217 | Մագնիտոլային տեղադրում | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 |
| 218 | Վառոցքային լարերի հանում և տեղադրում | 6,000 | 6,000 | 6,000 | 6,000 | 6,000 | 6,000 | 6,000 | 6,000 |
| 219 | Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 | 5,000 |
| 220 | Էլ/հաղորդալարերի հիմնական խուրցի հանում և տեղադրում | 80,000 | 80,000 | 80,000 | 80,000 | 80,000 | 80,000 | 80,000 | 80,000 |